

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԿՆԻԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՐԱՆ

ՈԱՖՅԱՆ ՈՈԲԵՐՏ ԱՐԹՈՒՐԻ

**ՇՈԳԵԳԱԶԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅԱՆՔԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՈԵԺԻՄՆԵՐԻ ԴԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԱՎԱՐԿՈՒՄԸ (ԵՐԱԵԿ-Ի
ՕՐԻՆԱԿԻ ՎՐԱ)**

**Ե.14.03 - «Ջերմաէներգետիկա» մասնագիտությամբ տեխնիկական
գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2015

**НАЦИОНАЛЬНЫЙ ПОЛИТЕХНИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ
АРМЕНИИ**

РАФЯН РОБЕРТ АРТУРОВИЧ

**ИССЛЕДОВАНИЕ И ОПТИМИЗАЦИЯ РАБОЧИХ РЕЖИМОВ
ПАРОГАЗОВОЙ УСТАНОВКИ (НА ПРИМЕРЕ ЕРТЭЦ)**

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата технических наук
по специальности 05.14.03 - “Теплоэнергетика”

ԵՐԵՎԱՆ 2015

Աստենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում (Պոլիտեխնիկ):

Գիտական դեկավար՝
Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տ.գ.թ., պրոֆ. Ո. Զ. Մարուխյան
տ.գ.դ., պրոֆ. Ս. Ա. Սինասյան
տ.գ.թ., դոց. Լ. Ս. Յովհաննիսյան

Առաջատար կազմակերպություն՝

«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ

Պաշտպանությունը կայանալու է 2015թ. դեկտեմբերի 23-ին, ժամը 15⁰⁰-ին ՀԱՊՀ-ում գործող ԲՈՆ-ի Էլեկտրատեխնիկայի և էներգետիկայի 038 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Տերյան փ., 105:

Աստենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀԱՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. նոյեմբերի 20-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, տ.գ.դ.

Ն. Ն. Պետրոսյան

Тема диссертации утверждена в Государственном инженерном университете Армении (Политехник).

Научный руководитель:

к.т.н., проф. В. З. Марухян

Официальные оппоненты:

д.т.н., проф. С. А. Минасян

к.т.н., доц. Л. С. Оганесян

Ведущая организация: ЗАО “Оператор электроэнергетической системы”

Защита диссертации состоится 23-го декабря 2015г. в 15⁰⁰ часов на заседании специализированного совета ВАК 038 – “Электротехника и энергетика”, действующего при НПУА по адресу: 0009, г. Ереван, ул. Теряна, 105.

С диссертацией можно ознакомиться в библиотеке НПУА.

Автореферат разослан 20-ого ноября 2015г.

Ученый секретарь
специализированного совета
д.т.н., проф.

Н. Н. Петросян

ԱՇԽԱՏՈՎԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքի արդիականությունը:

Ելեկտրական էներգիայի արտադրության ոլորտում գազատուրբինային տեղակայանքները (ԳՏՏ) և դրանցով կահավորված համակցված շղթեգազային ցիկլով աշխատող էներգաբարլոկները հանդիսանում են բնական ռեսուրսներով էլեկտրական էներգիայի արտադրության զարգացման հիմնական ուղղությունը: Ինչը պայմանավորված է ննանատիպ էներգաբարլոկների բարձր շահավետությամբ, մաննկրայնությամբ ինչպես նաև շրջակա միջավայրի վրա՝ ավանդական էներգաբարլոկների համեմատ ավելի փոքր վնասակար ազդեցությամբ:

Յարկ է նշել, որ գազատուրբինային տեղակայանքների արտադրողականությունը և աշխատանքի արդյունավետությունը խիստ կախվածության մեջ են մթնոլորտային օդի պարամետրերից, մասնավորապես՝ ջերմաստիճանից: Յաշվի առնելով այն հանգամանքը, որ էլեկտրական էներգիայի պահանջարկի պիկը ամռային ամսներին պայմանավորված է օդի հովացման համակարգերի գորեք զանգվածային կիրառմամբ և համընկնում է ԳՏՏ-ի արտադրողականության նվազման հետ, արտադրողներն ու շահագործողները ստիպված են փնտրել հզորության անկման փոխաստուցման նոր մեթոդներ: ՀՀ էներգահամակարգը բացառություն չի, և նույնպես տուժում է նկարագրված հիմնախնդրից:

Ակնհայտորեն, ցանկացած տեխնոլոգիա, որն ունակ է կանխել կան վերականգնել ոչ բարենպաստ կլիմայական պայմաններից բխող ԳՏՏ արտադրողականության և արդյունավետության ամկունը, դանում է թանկարժեք ռեսուրս: Այդ առումով, վերջին ժամանակներս, լայն տարածում են ստացել ԳՏՏ կոնդրեսոր մատուցվող օդի հովացման տարբեր համակարգեր, որոնք ԳՏՏ մատուցվող օդը հովացնելով, պապիկում են վերջինիս էներգետիկական և արդյունավետության ցուցանիշների մոտեցումը նախագծային արժեքներին: Շոգեգազային համակցված տեղակայանքների էներգետիկական պարամետրերի վրա ԳՏՏ կոնդրեսոր մատուցվող օդի պարամետրերի փոփոխության ազդեցության ճշգրիտ հաշվարկը հանդիսանում է այդ ազդեցության չեղորացման համապատասխան մեթոդի ընտրության հիմքը, և իրենից ներկայացնում է ժամանակակից էներգետիկայի խիստ կարևոր նշանակություն ունեցող խնդիրներից մեկը:

Աշխատանքի նպատակը և հետազոտության հիմնական խնդիրները:

Հետազոտության նպատակն է գազատուրբինային և համակցված ցիկլով աշխատող շղթեգազատուրբինային տեղակայանքների աշխատանքային ռեժիմների հետազոտումը և դրանց արդյունավետության և էներգետիկական ցուցանիշների լավարկման մեթոդների նշակումը:

Աշխատանքի հիմնական խնդիրներն են՝

1. Մշակել ԳՏՏ էներգետիկական ցուցանիշների հաշվարկի այնպիսի մեթոդիկա, որի միջոցով հնարավոր կլիմի գնահատել կոմպրեսոր մատուցվող օդի ջերմաստիճանից կախված ԳՏՏ հզորության փոփոխությունը, ՕԳԳ-ն և վառելիքի ծախսը:

2. Ուսումնասիրել ԳՏՏ կոմպրեսոր մատուցվող օդի հովացման համակարգերի տարատեսակները և ընտրել լավարկային տարբերակը:

3. Ուսումնասիրել ԳՏՏ կոմպրեսոր մատուցվող օդի ջերմաստիճանի ազդեցությունը կոմպրեսորի ճնշման բարձրացման աստիճանի փոփոխության վրա:

4. Ուսումնասիրել ԳՏՏ կոմպրեսոր մատուցվող օդի պարամետրերի փոփոխությամբ պայմանավորված ԳՏՏ աշխատանքային ռեժիմի փոփոխության ազդեցությունը գոլորշային ցիկլի վրա համակցված տեղակայանքների համար:

Աշխատանքի արդյունքում իիմնական խնդիր է դրված Երևանի ՁԵԿ-ի համակցված ցիկլով Եներգաբարովի համար ուսումնասիրել մքնոլորտային պայմաններից ԳՏՏ մատուցվող օդի ջերմաստիճանի ազդեցությունը տարեկան կտրվածքով, և ընտրված հովացման համակարգի միջոցով ստացվող լավարկումը, ինչպես նաև դիտարկել այդպիսի համակարգի տեղակայման տնտեսական շահավետության հարցերը:

Յետազոտության գիտական նորույթ:

1. Մշակվել է ԳՏՏ ջերմային հաշվարկի մեթոդիկա, որը հնարավորություն է տալիս հաշվարկել ԳՏՏ Եներգետիկական և արդյունավետության ցուցանիշները ԳՏՏ կոմպրեսոր մատուցվող օդի ջերմաստիճանի, ճնշման և հարաբերական խոնավության արժեքների լայն տիրույթում:
2. Առաջարկվել է ԳՏՏ կոմպրեսոր մատուցվող օդի ջերմաստիճանի փոփոխության ազդեցությունը ԳՏՏ կոմպրեսորի ճնշման բարձրացման աստիճանի վրա գնահատող բանաձև,
3. Առաջարկվել է մեթոդիկա, որը հնարավորություն է տալիս գնահատել ԳՏՏ կոմպրեսոր ներծծվող օդի պարամետրերի փոփոխության ազդեցությունն օգտահանիչ կարսայով շղգետուրբինի հզորության վրա:

Աշխատանքի կիրառական նշանակություն:

Մշակված մեթոդիկաները և ծրագրային ապահովման փաթեթը կարող են կիրառվել գազատուրիֆինային և համակցված տեղակայանքների Եներգետիկական և արդյունավետության ցուցանիշների հաշվարկման և դրանց լավարկման մեթոդների ուսումնասիրության նպատակով գործող կայաններում: Ինչպես նաև նշանակած տեղակայանքների կարգաբերման, փորձարկման և նախագծային աշխատանքների ժամանակ:

Մշակված մեթոդիկայի և ծրագրային ապահովման փաթեթի միջոցով հաշվարկվել է ԵրԶԵԿ-ի համակցված Եներգաբարովի վրա մքնոլորտային օդի ջերմաստիճանի ազդեցությունը տարեկան կտրվածքով, ինչպես նաև ջրային մշուշապատման հովացման համակարգի տեղակայմամբ Եներգաբարովի աշխատանքային ռեժիմի լավարկման չափը: Կատարվել է նաև ջրային մշուշապատման համակարգի տեխնիկատնտեսական հաշվարկ նշանակած Եներգաբարովի համար:

Երականացված ներույթ:

Երականացված հետազոտությունների իիմնական դրույթների ու արդյունքների մասին գեկուցվել է «Զերմաէներգետիկա և շրջակա միջավայրի պաշտպանություն» ամբիոնի գիտական սեմինարներում և ՀՊԵՀ-ի անենամյա տարեկան գիտաժողովներում (2010-2014թ.): Աստենախոսության դրույթներն ու արդյունքներն արտացոլված են 6 գիտական աշխատություններում, որոնց ցանկը բերված է սեղմագրի վերջում:

Աշխատանքի ծավալը և կառուցվածքը:

Ասենախոսությունը բարկացած է ներածությունից, չորս գլուխներից, եղրակացություններից, 97 ամուն օգտագործված գրականության ցանկից և 3 հավելվածներից: Ասենախոսական աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 161 էջ:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. ԳՏՏ էներգետիկական և արդյունավետության ցուցանիշների կոնյակի ներծծությունը ներծծվող օդի պարամետրերից կախվածության հաշվարկի մեթոդիկա:
2. ԳՏՏ կոնյակի ճնշման բարձրացման աստիճանի ներծծվող օդի ջերմաստիճանից կախվածության գնահատման փորձնական բանաձև:
3. Օգտահանիչ կարսայով համակցված տեղակայանքի շղգետությունից հզրության վրա ԳՏՏ կոնյակի ներծծվող օդի պարամետրերի ազդեցությունը գնահատելու մեթոդիկա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐԴՈՅ ԲՈՎԱՍՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են աշխատանքի նպատակը, գիտական նորությը և կիրառական արժեքը:

Սուարժ գլխում իրականացվել է մթնոլորտային պայմանների ազդեցության ուսումնասիրություն գազատուրբինային տեղակայանքների և համակցված ցիկլերի աշխատանքի վրա: Ուսումնասիրվել են ԳՏՏ կոնյակի նատուցվող օդի հովացման բոլոր համակարգերը: Դիտարկվել են այդ համակարգերի դրական և բացասական կողմերը: Դիմնավորվել է աշխատանքում կիրառված լավարկման մեթոդ՝ ԳՏՏ կոնյակի ներծծվող օդի խոնավ մշուշային հովացման եղանակի ընտրությունը: Մանրամասն նկարագրված է ջրային մշուշապատման հովացման համակարգի աշխատանքի սկզբունքը, ջրի փոշիացման տեսակները և դրանց աշխատանքի վրա ազդող գործոնները: Գնահատված է օդի ջերմաստիճանի փոփոխությունը կախված հոսքի արագությունից և օդի տեսակարար ջերմունակությունից, գնահատված է օդի մշուշային հովացման համար անհրաժեշտ ջրի քանակը և դրա որակին ներկայացվող պահանջները: Ներկայացված են մշուշային հովացման համակարգեր ներդրած ընկերությունների փորձի արդյունքները:

Երկրորդ գլխում հակիրծ ներկայացված են ՀՀ էներգահամակարգի առջև ծառացած հիմնախնդիրները, որոնք ավելի հստակ ցուցադրելու համար հաշվարկված են ՀՀ էներգահամակարգի բնութագրից որոշ պարամետրեր: Ներկայացված է Երևանի ՁԵԿ-ի նոր համակցված ցիկլով աշխատող ներգարւուկը, որա հիմնական սարքավորումների անվանական պարամետրերի նշնամը: Այս գլխում դիտարկվել են շղգեգազատուրբինային տեղակայանքների (ՑԳՏ) հնարավոր աշխատանքային ռեժիմները ՀՀ էներգահամակարգում: Կատարվել է, գրականությունում բերված, ԳՏՏ ջերմային հաշվարկի մեթոդների ուսումնասիրություն, պարզեցված համար դրանց կիրառելիությունը ԳՏՏ կոնյակի նատուցվող օդի հովացման համակարգերի արդյունավետության

հաշվարկի համար: Նշվել են այդ մեթոդների դրական և բացասական կողմերը աղյուսակային ձևում:

Ստորև ներկայացված են այն հիմնական թերությունները, որոնք խնդիր են առաջացրել մշակել նոր մեթոդիկա՝ ԳՏՏ կոմպյուտոր ներծծվող օդի պարամետրերի ազդեցությունը դրանց էներգետիկական և արդյունավետության ցուցանիշների վրա հաշվարկելու համար:

1. ԳՏՏ արտադրողները չեն բացահայտում ճնշման արժեքները տուրբինի և կոմպրեսորի աստիճաններում:


2. ԳՏՏ աշխատող մարմինների էնթալփիաների հաշվարկի աղյուսակային մեթոդն անխուսափելիորեն հանգեցնում է նշանակալի անճշտությունների:

3. Որևէ մեթոդում հաշվի չի առնվում ԳՏՏ կոմպրեսոր ներծծվող օդի խոնավապարունակությունը, ինչը կարող դեռ է կատարում հատկապես այդ օդի խոնավ հովացմանը լավարկային մեթոդների ուսումնասիրության համար:

4. ԳՏՏ կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճանը որոշակի կախվածության մեջ է գտնվում ներծծվող օդի ջերմաստիճանից, ինչը սակայն հաշվի չի առնվում որևէ հաշվարկային մեթոդում:

Եղորդ գլուխություն հրականացվել է Gas Turbine Handbook – Principles and Practices (T. Giampaolo), Gas Turbine Engineering Handbook (P. Boyce), Advanced Gas turbine Cycles (J. Horlock), Պարուած և Գազուած Տուրբիններ (Պ. Շլյախին), Գազոտурբիններ Ստանուական աշխատանքներ (Ա. Տրյախնի), Գազոտурբիններ և Պարուած Ստանուական աշխատանքներ (Վ. Վահանի և այլն) գրականությունում բերված ԳՏՏ ջերմային հաշվարկի հայտնի մեթոդների համակողմանի վերլուծություն, որի արդյունքում մշակվել է ԳՏՏ ջերմային հաշվարկի նոր մեթոդիկա, որը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել ԳՏՏ էներգետիկական և արդյունավետության ցուցանիշների վրա դրա կոմպրեսոր մատուցվող օդի պարամետրերի փոփոխության ազդեցության մասին:

Մշակված մեթոդիկայի հիման վրա Visual Basic 10.0 միջավայրում իրականացվել է հաշվարկային ալգորիթմ, որի հնտերֆեյսը ներկայացված է նկ.1-ում: Դաշտական գործությունը մեծացնելու նպատակով ցիկլի աշխատող մարմնի էնթալփիաները և էնտրոպիաները կամ դրանց հայտնի լինելու դեպքում հակադարձ Փունկցիաների միջոցով ճնշումը և ջերմաստիճանը հաշվարկվում են OKAWSP.dll ֆունկցիաների գրադարանի միջոցով:



Նկ.2 ԳՏՏ-ի էներգետիկական ցուցանիշների հաշվարկման ծրագրի հնտերֆեյս

Մշակված մեթոդիկայով հաշվարկների ելակետային պարամետրերն են՝

- դրսի օդի ջերմաստիճան՝ $t_{\text{ռ}} \text{ } ^{\circ}\text{C}$,
- դրսի օդի ճնշում՝ $P_{\text{ռ}} \text{ Pa}$,
- դրսի օդի հարաբերական խոնավություն՝ $\phi_{\text{ռ}}, \%$,
- վառելիքի այրման ստորին բանվորական ջերմություն՝ Q_E^{c} , $\text{կ}^{\circ}\text{կ}$,
- մատուցվող վառելիքի ճնշում՝ $P_{\text{վառ}}$, $U\text{Pa}$,
- մատուցվող վառելիքի ջերմաստիճան՝ $t_{\text{վառ}}$, $^{\circ}\text{C}$,
- վառելիքի ավելցուկային ճնշում այրման խցից առաջ՝ $\Delta P_{\text{ավ}}$, $U\text{Pa}$,
- կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճան՝ π_k ,
- տուրբինից առաջ ծխագագերի ջերմաստիճան՝ $t_{\text{գՏW}}$, $^{\circ}\text{C}$,
- կոմպրեսորի հզունարություն՝ $O44^{\text{c}}$, $\eta_{\text{հ}}$, %,
- գազատուրիֆինի ներքին հարաբերական ՕԳԳ՝ $\eta_{\text{գՏS}}$, %,
- վառելիքային կոմպրեսորի հզունարություն՝ $O44^{\text{c}}$, $\eta_{\text{հ}}$, %,
- այրման խցից $O44^{\text{c}}$, $\eta_{\text{հ}}$, %,
- ճնշման անկում այրման խցում՝ $\delta P_{\text{ախ}}$, %,
- ճնշման անկում գազային տուրբինում՝ $\delta P_{\text{գո}}$, %:

Տվյալների ներմուծումից հետո մեթոդիկայի հաշվարկների հերթականությունը հետևյալն է՝


1. շրջակա միջավայրի օդի հատկությունների հաշվարկ,
2. այրման արգասիքների պարամետրերի որոշում,
3. կոմպրեսորի հաշվարկ,
4. վառելիքային կոմպրեսորի հաշվարկ,
5. այրման խցիկի հաշվարկ,
6. հաշվեկշռի ստուգում,
7. ԳՏ-ի հաշվարկ,
8. ԳՏՏ-ի էներգետիկական ցուցանիշների հաշվարկ:

Հաշվարկների արդյունք են հանդիսանում ԳՏՏ-ի հետևյալ էներգետիկական ցուցանիշները՝

- կոմպրեսորի ներքին հզունարությունը բերված 1 կգ/վ վառելիքի ծախսի,
- գազատուրիֆինի ներքին հզունարությունը բերված 1 կգ/վ վառելիքի ծախսի,
- վառելիքային կոմպրեսորի ներքին հզունարությունը բերված 1 կգ/վ վառելիքի ծախսի,
- ԳՏՏ-ի ներքին օգտակար հզունարությունը բերված 1 կգ/վ վառելիքի ծախսի, որը հաշվի չի առնում մեխանիկական կորուստները,
- ԳՏՏ-ի $O44^{\text{c}}$,
- ԳՏՏ-ի հզունարությունը բերված կոմպրեսորում 1 կգ/վ օդի ծախսի:

Մշակված մեթոդիկայի և ծրագրային ապահովման փաթեթի միջոցով իրականացվել են ԳՏՏ էներգետիկական ցուցանիշների հաշվարկներ, երբ դրսի օդի հարաբերական խոնավությունը փոփոխվում է 0-ից 100% սահմաններում, իսկ ջերմաստիճանը հավասար է 15°C -ի, և դրա կոմպրեսորում սեղմնան


աստիճանը փոփոխվում է 13...18 միջակայքում, իսկ մնացած բոլոր ելակետային պարամետրերը մնում են հաստատուն: Նաև, եթե դրսի օլի ջերմաստիճանը փոփոխվում է 15-ից 35 °C, իսկ հարաբերական խոնավությունը հավասար է 60%-ի, դրա կոմպենսորում ճնշման բարձրացման աստիճանը փոփոխվում է 13...18 միջակայքում, իսկ մնացած բոլոր ելակետային պարամետրերը մնում են հաստատուն: Այդ հաշվարկների արդյունքները



գրաֆիկական տեսքերով ներկայացված են ստորև:


Նկ.2 ԳՏ 1կգ/վառելիքի ծախսի բերված ներքին հզորության կախվածությունը կոմպրենոր մատուցվող օդի հարաբերական խոնավությունից կոմպրենորում ճնշման բարձրացման 13...18 արժեքների դեպքում

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ԳՏՏ կոմպրենոր մատուցվող օդի հարաբերական խոնավության աճը ԳՏՏ 1կգ/վառելիքի ծախսի բերված ներքին հզորության ($N_{1,as}$) վրա ունենում է փոքր ազդեցություն: Այսպես, օրինակ կոմպրենորում ճնշման բարձրացման աստիճանի 13 արժեքի դեպքում ներծծվող օդի հարաբերական խոնավության 0-ից 100% փոփոխությունը հաճախ մնում է $N_{1,as}$ -ի 0,138 ՄՎո/(կգ/վ) փոփոխության: Իսկ, եթե կոմպրենորում ճնշման բարձրացման աստիճանը հավասար է 18-ի այդ փոփոխությունը հասնում է 0,18-ի: Այսինքն, կոմպրենոր ներծծվող օդի խոնավության ազդեցությունը ԳՏՏ 1կգ/վ վառելիքի ծախսի բերված ներքին հզորության վրա այնքան ավելի մեծ է, որքան մեծ է կոմպրենորում ճնշման բարձրացման աստիճանը (տես նկ.2):



Նկ.3 1կգ/վ վառելիքի ծախսի բերված ԳՏՏ կոմպրեսորի ներքին հղորության կախվածությունը կոմպրեսոր մատուցվող օդի հարաբերական խոնավությունից կոմպրեսորում ճնշման բարձրացման 13...18 արժեքների դեպքում

Նկ.3-ից երևում է, որ 1կգ/վ վառելիքի ծախսի բերված կոմպրեսորի ներքին հղորությունը ($N_{i,4}$) մատուցվող օդի հարաբերական խոնավության 0-ից 100% փոփոխման և կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճանի 13 արժեքի դեպքում փոփոխվում է 0,109 ՄՎտ/(կգ/վ)-ով: Իսկ, եթե կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճանը հավասար է 18-ի այդ փոփոխությունը համար է 0,157 ՄՎտ/(կգ/վ)-ի: Այսինքն, կոմպրեսոր ներծծվող օդի հարաբերական խոնավության աճը $N_{i,4}$ -ի վրա նույնապես ունի այնքան ավելի մեծ ազդեցություն, որքան մեծ է կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճանը:




Նկ.4 ԳՏՏ-ի 1կգ/վ վառելիքի ծախսիբերված ներքին օգտակար հղորության կախվածությունը, կոմպրեսոր մատուցվող օդի հարաբերական խոնավությունից կոմպրեսորում ճնշման բարձրացման 13...18 արժեքների դեպքում


ԳՏՏ-ի ներքին հղորությունը բերված կգ/վ վառելիքի ծախսի ($N_{i,4}$) կոմպրեսոր մատուցվող օդի ջերմաստիճանի բարձրացմանը զուգընթաց մեծանում է, ընդ որում, եթե կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճանը հավասար է 13-ի այդ փոփոխությունը ներծծվող օդի հարաբերական խոնավության 0...100% աճելու դեպքում ունի 0,029 ՄՎտ/(կգ/վ) արժեք, իսկ կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճանը 18 արժեքի դեպքում՝ 0,024 ՄՎտ/(կգ/վ): Այսինքն, որքան ավելի մեծ է կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճանը, այնքան ավելի փոքր է ներծծվող օդի խոնավության բարձրացման բացասական ազդեցությունը ԳՏՏ-ի ներքին հղորության վրա: Սա պայմանավորված է այն փաստով, որ չնայած, որ կոմպրեսորում ճնշման բարձրացման որևէ տվյալ արժեքի դեպքում ներծծվող օդի հարաբերական խոնավության բարձրացման դեպքում նվազում է 1 կգ/վ վառելիքի ծախսի բերված և ԳՏՏ ներքին հղորությունը և կոմպրեսորի ներքին հղորությունը, սակայն կոմպրեսորի ճնշման բարձրացման աստիճանի մեծացմանը զուգընթաց մատուցվող օդի հարաբերական խոնավության մեծացման հետ կապված կոմպրեսորի ներքին հղորության անկումն ավելի արագ է մեծանում քան 1կգ/վ վառելիքի ծախսի բերված ԳՏՏ ներքին հղորության ամկումը (տես նկ.4):

Կոմպրեսորում ճնշման բարձրացման ցանկացած աստիճանի դեպքում ԳՏՏ-ի կոմպրեսորում 1կգ/վ օդի ծախսի բերված ԳՏՏ-ի հղորությունը $N_{i,4,9}$ -ը

մատուցվող օդի հարաբերական խոնավության բարձրացմանը զուգընթաց մեծանուն է: Մատուցվող օդի հարաբերական խոնավության 0...100% բարձրացման հետ պայմանավորված N_{lo} -ի մեծացման արժեքը կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճանից գրեթե կախված չէ, և դրա 13...18 արժեքների դեպքում ընդունում է 0,0035...0,0038 արժեքներ (նես. նկ.5):




Նկ.5 ԳՏՏ-ի կոմպրեսորում $1/q/\varphi$ /օդի ծախսի բերված ԳՏՏ հզորության կախվածությունը կոմպրեսոր մատուցվող օդի հարաբերական խոնավությունից կոմպրեսորում ճնշման բարձրացման 13...18 արժեքների դեպքում



Նկ.6 ԳՏՏ-ի ՕԳԳ-ի կախվածությունը կոմպրեսոր մատուցվող օդի հարաբերական խոնավությունից կոմպրեսորում ճնշման բարձրացման 13...18 արժեքների դեպքում

Ինչպես երևում է նկ.6-ից, ԳՏՏ-ի ՕԳԳ-ն կոմպրեսոր մատուցվող օդի հարաբերական խոնավության մեծացման հետ նվազում է, ընդ որում, կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճանի 13 արժեքի դեպքում հարաբերական խոնավության 0...100% բարձրացումը հանգեցնում է ՕԳԳ-ի

0,059% ամկման, իսկ ճնշման բարձրացման աստիճանի 18 արժեքի դեպքում՝ 0,048%: Այսինքն, ինչքան ավելի մեծ է կոմպրենորում ճնշման բարձրացման աստիճանն այնքան ավելի փոքր է ԳՏՏ-ի ՕԳԳ-ի վրա մատուցվող օդի խոնավության բարձրացման բացասական ազդեցությունը:




Նկ.7 ԳՏՏ-ից հեռացող ծխագագերի ջերմաստիճանի կախվածությունը կոմպրենոր մատուցվող օդի հարաբերական խոնավությունից կոմպրենորում ճնշման բարձրացման 13...18 արժեքների դեպքում

Ընդհանուր առմամբ ԳՏՏ կոմպրենոր մատուցվող օդի հարաբերական խոնավության բարձրացումը հանգեցնում է ԳՏՏ-ից հեռացող ծխագագերի ջերմաստիճանի բարձրացման: Այդ բարձրացման արժեքը կոմպրենորում ճնշման բարձրացման աստիճանի 13 արժեքի դեպքում հավասար է $1,847 \text{ } ^\circ\text{C}$ 0...100% հարաբերական խոնավության բարձրացման դեպքում, իսկ կոմպրենորում ճնշման բարձրացման 18 արժեքի դեպքում՝ $1,937 \text{ } ^\circ\text{C}$. Այսինքն, ԳՏՏ-ի կոմպրենոր ներծծվող օդի հարաբերական խոնավության մեծացումը ԳՏՏ-ից հեռացող ծխագագերի ջերմաստիճանի վրա ունի այնքան ավելի մեծ ազդեցություն, որքան ավելի մեծ է ԳՏՏ-ի կոմպրենորում ճնշման բարձրացման աստիճանը (տես նկ.7):


Չաշվի առնելով վերը նկարագրվածը կարելի է ասել, որ ԳՏՏ-ի կոմպրենոր ներծծվող օդի հարաբերական խոնավության բարձրացումը ԳՏՏ ներգետիկական և արյունավետության ցուցանիշների վրա ունենում է բացասական, բայց փոքր ազդեցություն, ուստի կարելի է ասել, որ ԳՏՏ-ի աշխատանքային ռեժիմների լավարկման համար կոմպրենոր մատուցվող օդի հովացման թաց համակարգերի կիրառությունը, որոնք բերում են կոմպրենոր մատուցվող օդի հարաբերական խոնավության աճի մինչև 100%, լիովին նպատակահարմար է:

ԳՏՏ կոմպրենոր մատուցվող օդի ջերմաստիճանի 15-ից $35 \text{ } ^\circ\text{C}$ աճելու դեպքում և կոմպրենորում ճնշման բարձրացման աստիճանի 13 արժեքի դեպքում ԳՏՏ-ի կգ/Վ վառելիքի ծախսի բերված ներքին օգտակար հզրությունը աճում է $1,398 \text{ } \text{ՄՎտ}/(\text{կգ}/\text{Վ})$ -ով: Իսկ, եթե կոմպրենորում ճնշման բարձրացման աստիճանը հավասար է 18-ի այդ փոփոխությունը կազմում է $1,974 \text{ } \text{ՄՎտ}/(\text{կգ}/\text{Վ})$: Այսինքն ԳՏՏ-ի կոմպրենոր մատուցվող օդի ջերմաստիճանի փոփոխման

ազդեցությունը ԳՏ-ի 1 կգ/վ վառելիքի ծախսի բերված ներքին օգտակար հզորության վրա այնքան ավելի մեծ է, որքան մեծ է կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճանի արժեքը: Ընդ որում ջերմաստիճանի բարձրացումը ունի դրական ազդեցություն ԳՏ-ի ներքին հզորության վրա (տես նկ.8):




Նկ.8 ԳՏ 1 կգ/վ վառելիքի ծախսի բերված ներքին հզորության կախվածությունը կոմպրեսոր մատուցվող օդի ջերմաստիճանից կոմպրեսորում ճնշման բարձրացման 13...18 արժեքների դեպքում



Նկ.9 1 կգ/վ վառելիքի ծախսի բերված ԳՏՏ կոմպրեսորի ներքին հզորության կախվածությունը կոմպրեսոր մատուցվող օդի ջերմաստիճանից կոմպրեսորում ճնշման բարձրացման 13...18 արժեքների դեպքում


Նկ.9-ից երևում է, որ 1 կգ/վ վառելիքի ծախսի բերված ԳՏՏ-ի կոմպրեսորի ներքին հզորությունը ներծծվող օդի ջերմաստիճանի բարձրացման հետ

Առաջնապես մեծանուն է: Ընդ որում, որքան ավելի մեծ է կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճանի արժեքը, այնքան ավելի մեծ է այդ ազդեցությունը: Այսպես, ներծծվող օդի ջերմաստիճանի 15-ից 35 °C բարձրանալու դեպքում, երբ կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճանը հավասր է 13-ի կոմպրեսորի ներքին հզորությունը մեծանուն է 1,898 ՄՎտ/(կգ/վ)-ով, իսկ երբ ճնշման բարձրացման աստիճանը հավասր է 18-ի 2,606 ՄՎտ/(կգ/վ)-ով:



Նկ.10 ԳՏՏ-ի 1կգ/վ վառելիքի ծախսիբերված ներքին օգտակար հզորության կախվածությունը, կոմպրեսոր նատուրվող օդի ջերմաստիճանից կոմպրեսորում ճնշման բարձրացման 13...18 արժեքների դեպքում


Կոմպրեսոր ներծծվող օդի ջերմաստիճանի բարձրացման հետևանքով մեծանուն է ԳՏ-ի ներքին օգտակար հզորությունը, բայց և միևնույն ժամանակ մեծանուն է կոմպրեսորի ներքին հզորությունը, ընդ որում, ճնշման բարձրացման ցանկացած աստիճանի դեպքում ջերմաստիճանի միևնույն փոփոխության դեպքում կոմպրեսորի ներքին հզորությունը ավելի մեծ արժեքով է մեծանուն, ինչով էլ պայմանավորված է, որ ներծծվող օդի ջերմաստիճանի բարձրացումը ընդհանուր առնամբ բերում է ԳՏՏ օգտակար հզորության նվազման: Այդ նվազումը՝ 15-ից 35 °C ջերմաստիճանի բարձրացման դեպքում, երբ կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճանն ունի 13 արժեք կազմում է 0,5 ՄՎտ/(կգ/վ), իսկ 18 արժեքի դեպքում՝ 0,632 (տես Նկ.10):




Նկ.11 ԳSS-ից հեռացող ծխագագերի ջերմաստիճանի կախվածությունը կոմպրեսոր մատուցվող օդի ջերմաստիճանից կոմպրեսորում ճնշման բարձրացման 13...18 արժեքների դեպքում

Հեռացող ծխագագերի ջերմաստիճանը մյուս ելակետային պայմանների հաստատում մնալու պարագայում, ներծծվող օդի ջերմաստիճանի բարձրացմանը զուգընթաց նույնպես բարձրանում է: Եթե ճնշման բարձրացման աստիճանի արժեքը կոմպրեսորում հավասար է 13-ի ներծծվող օդի ջերմաստիճանի 15-ից 35°C բարձրացումը հանգեցնում է ԳSS-ից հեռացող ծխագագերի ջերմաստիճանի $1,782^{\circ}\text{C}$ -ով բարձրացման, իսկ ճնշման բարձրացման աստիճանի 18 արժեքի դեպքում՝ $1,793^{\circ}\text{C}$ -ով (տես նկ.11):

Ընդհանուր առմամբ ԳSS-ի ՕԳԳ-ն կոմպրեսոր ներծծվող օդի ջերմաստիճանի բարձրացման հետևանքով նվազում է: Ներծծվող օդի 15°C -ից 35°C բարձրանալու դեպքում, եթե կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճանը հավասար է 13-ի, ԳSS-ի ՕԳԳ-ն նվազում է 0,999%-ով, իսկ եթե ճնշման բարձրացման աստիճանը հավասար է 18-ի՝ 1,262%-ով: Այսինքն, ներծծվող օդի ջերմաստիճանի բարձրացման բացասական ազդեցությունը ԳSS-ի ՕԳԳ-ի վրա այնքան ավելի մեծ է, որքան մեծ է ԳSS-ի կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճանի արժեքը (տես նկ.12):



Նկ.12 ԳSS-ի ՕԳԳ-ի կախվածությունը կոմպրեսոր մատուցվող օդի ջերմաստիճանից կոմպրեսորում ճնշման բարձրացման 13...18 արժեքների դեպքում




Նկ.13 ԳՏՏ-ի կոմպրեսորում $1\text{kg}/\text{Վ}$ օդի ծախսի բերված ԳՏՏ հզրության կախվածությունը կոմպրեսոր մատուցվող օդի ջերմաստիճանից կոմպրեսորում ճնշման բարձրացման $13\dots18$ արժեքների դեպքում

ԳՏՏ-ի հզրությունը կոմպրեսորում $1 \text{ kg}/\text{Վ}$ օդի հաշվով, ներծծվող օդի ջերմաստիճանի բարձրացման դեպքում նվազում է: Կոմպրեսորում օդի $1 \text{ kg}/\text{Վ}$ ծախսի բերված ԳՏՏ հզրությունը ներծծվող օդի ջերմաստիճանի $15\text{-ից } 35^{\circ}\text{C}$ բարձրանալուց նվազում է $0,021 \text{ U}_{\text{Վ}}/(\text{kg}/\text{Վ})$ -ով, եթե կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճանը հավասար է 13-ի և $0,026 \text{ U}_{\text{Վ}}/(\text{kg}/\text{Վ})$ -ով, եթե ճնշման բարձրացման աստիճանը հավասար է 18-ի (տես նկ.13):

Երրորդ գլխի վերջին պարագրաֆում իրականացվել է մշակված ներողիկայի հավաստիության ստուգում՝ “Յուազդան-5” էներգաբայուկում տեղակայված գազատուրբինային տեղակայանքի իրական ցուցանիշների հետ համեմատությամբ: Յաշվարկվել են ԳՏՏ հզրության և ՕԳԳ-ի մշակված ներողիկայով հաշվարկման սխալանքի տոկոսները, որոնք ունեցել են համապատասխանաբար $0,46\%$ և $0,87\%$ արժեքները:

Չորրորդ գլխում ուսումնասիրվել է ԳՏՏ կոմպրեսոր ներծծվող օդի ջերմաստիճանի ազդեցությունը դրանում ճնշման բարձրացման աստիճանի և օգտահանիչ կաթսայով աշխատող շղթետուրբինային տեղակայանքի վրա:


Գազատուրբինային տեղակայանքի իդեալական ցիկլը կազմված է կոմպրեսորում սեղմնան հզունուրուա պրոցեսից($1\text{-}2\text{s}$), այրման խցում ջերմության հաղորդման իզոբար պրոցեսից($2\text{s}-3\text{s}$), տուրբինում հզունուրուա ընդարձակումից($3\text{s}-4\text{s}$) և $4\text{s}-1$ պայմանական պրոցեսը փակում է ցիկլը (նկ.15): Իրական ԳՏՏ-ում, պայմանավորված շիման և այլ անհակաղարձելի կորուստներով, պրոցեսն ընթանում է էնտրոպիայի աճով և ունի $1\text{-}2\text{-}3\text{-}4$ տեսքը (նկ.14):



Նկ.14 Պարզ ԳՏՏ-ի աշխատանքային ցիկլը T-s դիագրամի վրա

Եթե բարձրանում է կոմպրեսոր ներծծվող օդի ջերմաստիճանը, 1 կետը նույն հղորարով տեղաշարժվում է դեպի աջ (1-1'): Կոմպրեսորի ներքին հարաբերական ՕԳԳ-ի փոփոխությունը, կախված ներծծվող օդի ջերմաստիճանից, աննշան է և կարող է անտեսվել: Կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճանի կախվածությունը ներծծվող օդի ջերմաստիճանից գնահատելու համար դիտարկվել է նկ.15-ում պատկերված միջին հղորության “GE Frame 7F” ԳՏՏ-ի կոմպրեսոր մատուցվող օդի ջերմաստիճանից կախված դրա ելքում ճնշման արժեքների դիագրամը:

Բ.ՄՊա



Նկ.15 GT Frame 7F գազատուրբինի կոմպրեսորի ելքում ճնշման կախվածությունը դրսի օդի ջերմաստիճանից

Քանի որ ԳՏՏ-ները, որպես կոնոն, ճնշմագծվում են ներծծվող օդի 15°C ջերմաստիճանի համար, այդ ջերմաստիճանի դեպքում կոմպրեսորի ելքում օդի ճնշումը ունի իր անվանական արժեքը: Վերցնելով ճնշման արժեքները և արտահայտելով դրանք տոկոսներով՝ 15°C ջերմաստիճանի դեպքում անվանական ճնշման նկատմամբ կունենանք աղ.1-ում բերված տվյալները:

Այլուսակ 1.

GT Frame 7F գազատուրբինի կոմպրեսորի ելքում ճնշման
կախվածությունը
կոմպրեսոր ներծծվող օդի ջերմաստիճանից

կոմպրեսոր ներծծվող օդի ջերմաստիճան, $t \text{ } ^\circ\text{C}$	ճնշում կոմպրեսորի ելքում, P %
15	100
18,9	99,2
21,7	96,5
24,4	95,5
27,2	93,9
30	92,8
32,8	91,7
35,6	90,1


Աղ.1-ում ներկայացված տվյալների մոտարկման միջոցով ստանում ենք փորձնական բանաձև, որը բնութագրում է միջին հզորության գազատուրբինի կոմպրեսորի ելքային ճնշման փոփոխությունը ներծծվող օդի ջերմաստիճանի փոփոխման 15... 35,5 $^\circ\text{C}$ տիրույթում՝ արտահայտված %-ով անվանական ճնշման նկատմամբ:

$$P\% = 0,363t - 6056,541/t^2 + 440,075/\ln(t) - 40,948,$$

որտեղ t -ն կոմպրեսոր ներծծվող օդի ջերմաստիճանն է $^\circ\text{C}$, $P\%$ -ը կոմպրեսորի ելքում ճնշումն է արտահայտված տոկոսներով ելակետային ճնշման նկատմամբ:

Տուրբինի ներքին հարաբերական ՕԳԳ-ն պայմանավորված է գազային տուրբինի մուտքում ծխագագերի ջերմաստիճանով, որը ժամանակակից գազատուրբինային տեղակայանքներում բերնվածքի՝ անվանականին մոտ տիրույթում մնում է հաստատուն, այսինքն՝ անկախ է կոմպրեսոր ներծծվող օդի ջերմաստիճանի արժեքից:

Փաստորեն, եթե կոմպրեսոր ներծծվող օդի 15 $^\circ\text{C}$ ջերմաստիճանի պայմաններում ԳՏՏ-ի աշխատանքային ցիկլը ունի 1-2-3-4 տեսքը, ապա ներծծվող օդի 15 $^\circ\text{C}$ -ից բարձր արժեքների դեպքում այն կունենա 1'-2'-3'-4' տեսքը:



Նկ.16 ԳՏՏ-ի աշխատանքային ցիկլի փոփոխությունը դրսի օդի ջերմաստիճանի բարձրացման հետևանքով

Յաշվի առնելով վերը նկարագրվածը՝ ԳՏՏ ջերմային հաշվարկի մեթոդիկան կարելի է կիրառել կոմպրեսոր ներծծվող օդի բավարար ջերմաստիճանային տիրություն ԳՏՏ հզորությունը, ինչպես նաև ջրային մշուշապատճան համակարգի կիրառման հետևանքով վերականգնվող հզորության մեծությունը գնահատելու համար:

ԳՏՏ ջերմային հաշվարկի գլուխ 3-ում առաջարկվող հաշվարկային ալգորիթմն միջոցով, մի շարք էներգետիկական ցուցանիշների շարքում հաշվարկվում է նաև տրված պայմանների դեպքում օդի խտությունը (ρ), 1 կգ վառելիքի այրման համար տեսականորեն անհրաժեշտ օդի զանգվածը (Lo), 1 կգ-ի հաշվով օդի ավելցուկային ծախսը ($g_{o\eta_w}$), և ԳՏՏ-ի հզորությունը կոմպրեսորում 1 կգ օդի հաշվով ($Ni_o\eta$), որոնք կարևոր դեր են խաղողմ՝ ջերմաստիճանի փոփոխման ազդեցությունը շղգեուժային ցիկլի վրա գնահատելու համար: Եթե բարձրանում է ԳՏՏ կոմպրեսոր մատուցվող օդի ջերմաստիճանը, բարձրանում է նաև ԳՏՏ-ից հեռացող ծխագագերի ջերմաստիճանը, հետևաբար և էնթալպիան: Սակայն քանի որ կոմպրեսորը հաստատուն ծավալային մերենա է, և օդի ջերմաստիճանի մեծացումը հանգեցնում է դրա խտության փորձացման, ուստի ԳՏՏ կոմպրեսորով զանգվածային ծախսը ներծծվող օդի ջերմաստիճանի աճին զուգընթաց նվազում է: Ուստի, օդի ջերմաստիճանի փոփոխության հետ կապված շղգեուժային տեղակայանքի հզորության փոփոխության գնահատման համար պետք է հաշվել ԳՏՏ-ից հեռացող ծխագագերի ջերմային էներգիայի փոփոխությունը:

Հեռացող ծխագագերի հետ տարվող ջերմության քանակությունը հավասար է հեռացող ծխագագերի էնթալպիայի և ծախսի արտադրյալին՝

$$Q = Gm^* h_{qSN}, \frac{U_2 - U_1}{C_p}$$

որտեղ h_{qSN} -ն ծխագագերի էնթալպիան է, Gm -ն հեռացող ծխագագերի ծախսն է կգ/վ-ով, U_2 յուրաքանչյուր տուրբինի համար հաշվարկվում է՝ ելեկով նրա անվանական հզորությունից և ելակետային պայմանների դեպքում հաշվարկից, որի արդյունքներից օգտվելով՝ հաշվարկվում է ԳՏՏ-ի կոմպրեսորում օդի

զանգվածային ծախսը (Gկոմ) և, հաշվի առնելով օդի խտությունը այդ պայմաններում, որոշվում է ԳՏՏ կոմպրեսորի ծավալային ծախսը (Gկv), որը հաստատուն է տրված ԳՏՏ-ի համար՝

$$G_{կոմ}=N_{Ը}/N_{i_օռ}, \frac{կգ}{վ},$$

որտեղ $N_{Ը}$ -ը ելակետային պայմաններում ԳՏՏ-ի հզորությունն է:

$$G_{կv}=G_{կոմ}/\rho, \frac{մ^3}{վ},$$

$$G_{մ}=G_{կv}*\rho+G_{կv}*\rho/(g_{օռ.ապ}+L_օ) \frac{կգ}{վ}.$$

ՈՒՆԵՆԱԼՈՎ Q մեծությունը ելակետային պայմաններում և այդ դեպքում՝ ՇԳՏ-ի շոգետուրբինի հզորությունը, և հաշվարկելով դրսի օդի ցանկացած ջերմաստիճանի դեպքում Q մեծության արժեքը, և այն համեմատելով ելակետային պայմանների իր արժեքի հետ, կարելի է գնահատել շոգետուրբինի գարգացմենիք հզորությունը տվյալ ջերմաստիճանի դեպքում:

Առաջարկվող եղանակի միջոցով գնահատվել է Երթեկ-ի նոր էներգաբարլոկի թերարտադրանքը տարվա ընթացքում ջերմաստիճանի նախագծայինից բարձր տիրություն: Ինչպես նաև հաշվարկվել է այդ թերարտադրանքից խուսափման առաջարկվող լավարկային մեթոդի տեխնիկատունտեսական արդյունավետությունը:

Դիտարկվող գազատուրբինային տեղակայանքի կոմպրեսորում օդի ծավալային ծախսը $15^{\circ}C$ ջերմաստիճանի և 60% հարաբերական խոնավության պարագայում հավասար է $523,08 \frac{կգ}{վ}$: Քանի որ այդ պայմաններում օդի խտությունը կազմում է $1,22 \frac{կգ}{մ^3}$, ապա կոմպրեսորի ծավալային ծախսը կազմում է $428,65 \frac{մ^3}{վ}$: Այս ծավալային ծախսը մնում է հաստատուն:

Դետարար ԳՏՏ հզորությունը նշված նախագծային պայմաններում հավասար կլիմի $155,2 \text{ՄՎլ}$: Այս նույն պայմաններում Երթեկ-ի համակցված ցիկլով աշխատող Էլեկտրակայանում շոգետուրբինի հզորությունը հավասար է $63,4 \text{ՄՎլ}$: Q մեծությունը այդ պայմաններում հավասար է $410878,5 \frac{կՋ}{վ}$:

Գնահատենք էլ. էներգիայի թերարտադրությունը տարվա կտրվածքով օդի ջերմաստիճանի $12^{\circ}C$ -ից բարձր լինելու հետևանքով: Վերցնենք միջին հարաբերական խոնավությունը Երևան քաղաքի համար այն ամիսներին, որոնց ընթացքում միջին ջերմաստիճանը բարձր է $15^{\circ}C$ -ից, քանի որ դրանցից ցածր ջերմաստիճանների դեպքում հովացման հետևանքով ԳՏՏ կոմպրեսորի մուտքում ստացվում են վլուագավոր ջերմաստիճաններ, կապված սառցակալման հնարավորության հետ: Դրանք մարտից նոյեմբեր ամիսներն են (տես աղ.2 և 3): Սակայն մարտ և նոյեմբեր ամիսներին $15^{\circ}C$ -ից բարձր ջերմաստիճանների միջին տևողականությունը հավասար է ընդամենը $6,72 \text{ ժամ}$, ուստի այդ ամիսները դուրս են գալիս դիտարկվող գոտուց: Միջին հարաբերական խոնավությունը մնացած դիտարկվող ամիսների ընթացքում լինում է $49,857 \%$:

Այլուսակ 2.

Միջին ամսեկան ջերմաստիճանների տևողականություններն ըստ ամիսների Երևան քաղաքի հանար:

Իերմաստիճան	Միջիններ	Ամիսներ										
		-hg	մինչև	3	4	5	6	7	8	9	10	11
15,1	20	0,2	6,7	16,8	7,9	0,6	0,8	12	8,5	0,08		
20,1	25	0	0,3	7	17,4	12,9	13,9	14,1	0,5	0		
25,1	30	0	0	0	4,1	16,4	15,9	1,5	0	0		

30,1	35	0	0	0	0	1	0,4	0	0	0
------	----	---	---	---	---	---	-----	---	---	---

Այլուսակ 3.

Միջին ամսեկան ջերմաստիճանների տևողականություններն ըստ
ժամերի Երևան քաղաքի համար

միջին ջերմաս- տիճան	ժամեր										Գումար
	3-րդ ամիս	4-րդ ամիս	5-րդ ամիս	6-րդ ամիս	7-րդ ամիս	8-րդ ամիս	9-րդ ամիս	10-րդ ամիս	11-րդ ամիս		
17,5	-	160,8	403,2	189,6	14,4	19,2	288	204	-	1279,2	
22,5	0	7,2	168	417,6	309,6	333,6	338,4	12	0	1586,4	
27,5	0	0	0	98,4	393,6	381,6	36	0	0	909,6	
32,5	0	0	0	0	24	9,6	0	0	0	33,6	

Կորուստները գնահատվում են ըստ ջերմաստիճանային տիրույթների՝ $5^{\circ}C$ քայլով: Այսինքն, նախ հաշվարկվում է կորուստը պայմանավորված $17,5^{\circ}C$ միջին ջերմաստիճանի տևողականության դեպքում, իետո՛ $22,5^{\circ}C$ միջին տևողականության հետ կապված և այլն: Բոլոր կորուստների գումարը կլինի միջին տարեկան կորուստը կապված ջերմաստիճանի բարձր լինելու հետ: $17,5^{\circ}C$ միջին ջերմաստիճան նկատվում է տարեկան $1279,2$ ժամ: Այդ ջերմաստիճանի դեպքում ԳՏՏ կոմպրեսորում ճնշման բարձրացման աստիճանը հավասար է $15^{\circ}C$ -ում իր ունեցած արժեքի $99,4\%-\text{ին}$, $15,3$: Կառուցենք աղյուսակ, որում արտահայտված կլինեն աղ.3-ում նշված ջերմաստիճանների և տևողականությունների դեպքում դիտարկվող էներգաքաղաքացի գազատուրիֆինային և շոգենուժային տեղակայանքների հզորությունները գնահատված վերը նկարագրված մերոդով, արտադրանքը և վառելիքի ծախսը (աղ.4):

Ինչպես ցույց են տալիս աղ.4-ում բերված հաշվարկների արդյունքները ԵրԶԵԿ-ի նոր էներգաքաղաքացի դիտարկվող ջերմաստիճանային տևողականությամբ տիրություն արտադրում է $783,7$ մէջ. ԿՎտ.ժ էլ. էներգիա: Սակայն եթե դրա հզորությունը լիներ հավասար իր նախագծայինին, այդ նույն տիրույթում այն կարտադրեր $832,6$ մէջ. ԿՎտ.ժ էլ. էներգիա: Այսինքն դիտարկվող $3808,8$ ժամների ընթացքում կայանի բերարտադրությունը կազմում է $48,8$ մէջ. ԿՎտ.ժամ:

Դզորության տեսանկյունից աղ.4-ում բերված տվյալները վկայում են, որ $17,5^{\circ}C$ միջին ջերմաստիճանի նկատվող $1279,2$ ժամների ընթացքում ԳՏՏ հզորությունը կազմում է նախագծայինի $95,9\%-ը$, իսկ շոգենութրիֆինը $98,2\%$: Իսկ $32,5^{\circ}C$ միջին ջերմաստիճանի դիտարկվող $33,6$ ժամների ընթացքում ԳՏՏ հզորությունը ընկնում է մինչև նախագծայինի $86,2\%-ին$ հավասար:

Այլուսակ 4

ԵրԶԵԿ-ի գազատուրիֆինային և շոգենուժային տեղակայանքների հզորությունները և գումարային արտադրանքը դիտարկվող տևողականությամբ ջերմաստիճանների դեպքում

t, $^{\circ}C$	17,5	22,5	27,5	32,5
π	15,3	14,9	14,4	14,1
Ni_օղ, ՄՎտ/(կգ/վ)	0,319	0,313	0,308	0,303
Ni_գՏ, ՄՎտ/(կգ/վ)	38,35	38,28	38,17	38,12

Ni ₄ , ՄՎտ/(կգ/վ)	21,06	21,21	21,33	21,50
Ni ₄₄ , ՄՎտ/(կգ/վ)	0,129	0,124	0,119	0,116
η, %	36,14	35,67	35,19	34,75
Ni, ՄՎտ/(կգ/վ)	17,16	16,94	16,71	16,49
Q, կԶ/վ	403523,6	399460,2	395781,5	391986,7
N _{qs} , ՄՎտ	148,8	143,6	138,6	133,9
N _{cs} , ՄՎտ	62,3	61,6	61,07	60,5
T, σ	1279,2	1586,4	909,6	33,6
W _Σ , կՎտ σ	270x10 ⁶	325,6 x10 ⁶	181,6 x10 ⁶	6,5 x10 ⁶
G _{լ.Σ.} , m	39,9 x10 ³	48,4 x10 ³	27,2 x10 ³	0,98 x10 ³

Ենթադրենք էներգաբլոկի ԳՏՏ-ի վրա տեղակայվել է կոմպրեսոր մատուցվող օդի ջրային մշուչապատճան հովացման համակարգ: Այդ դեպքում ԳՏՏ նատուցվող օդը հովացվում է մինչև տվյալ մթնոլորտային ճնշմանը համապատասխան և դիտարկվող տևողականություններով միջին ջերմաստիճանների դեպքում հաստատվող խոնավ ջերմաչափի ջերմաստիճանին: Խոկ հարաբերական խոնավությունը հասնում է 100 %-ի: Այդ ջերմաստիճանները և դրանց դեպքում ԳՏՏ ջերմային հաշվարկի արդյունքները, ստեղծված հղորությունը և վառելիքի ծախսերը բերված են աղ.5-ում:

Այլուսակ 5.

Եղջեկ-ի գազատուրբինային և շղթանակային տեղակայանքների հղորությունները և գումարային արտադրանքը դիտարկվող տևողականությամբ ջերմաստիճանների պայմաններում հովացման համակարգի կիրառման դեպքում

t, °C	17,5	22,5	27,5	32,5
t _h , °C	11,54	15,65	19,77	23,92
π	15,4	15,4	15,1	14,7
Ni _{on} , ՄՎտ/(կգ/վ)	0,327	0,323	0,319	0,315
Ni _{qs} , ՄՎտ/(կգ/վ)	37,82	38,20	38,21	38,08

Այսուակ 5-ի
շարունակություն

$t, {}^{\circ}C$	17,5	22,5	27,5	32,5
$Ni_{-4}, \frac{ՄՎտ}{(կգ/վ)}$	20,36	20,85	21,04	21,10
$Ni_{-4}, \frac{ՄՎտ}{(կգ/վ)}$	0,147	0,147	0,127	0,123
$\eta, \%$	36,46	36,23	35,89	35,48
$Ni, \frac{ՄՎտ}{(կգ/վ)}$	17,31	17,20	17,04	16,85
$Q, \frac{կԶ/վ}{}$	412340	406686	403063	400341
$N_{-48}, \frac{ՄՎտ}{}$	155,8	151,07	146,8	142,7
$N_{-75}, \frac{ՄՎտ}{}$	63,6	62,7	62,2	61,8
T, σ	1279,2	1586,4	909,6	33,6
$W_{\Sigma}, \frac{կՎտ \sigma}{}$	$280,7 \times 10^6$	$339,2 \times 10^6$	$190,1 \times 10^6$	$6,9 \times 10^6$
$G_{\Sigma, \text{տ}}$	$41,6 \times 10^3$	$50,2 \times 10^3$	$28,2 \times 10^3$	$1,02 \times 10^3$

Ինչպես տեսնում ենք աղ.5-ում բերված տվյալներից, ԳՏՏ կոմպրեսոր մատուցվող օդի հովացման ջրային մշուշապատման համակարգի կիրառության արդյունքում, դիտարկվող ժամանակահատվածում հնարավոր է արտադրել 816,9 մ 3 /մ. կՎտ.ժ էլ. Եներգիա: Այսինքն բլոկը հովացման համակարգի կիրառման արդյունքում արտադրում է իր նախագծային արտադրանքի 98,1 % -ը, մինչդեռ առանց հովացման համակարգի այն արտադրում է 94,1 % -ը: Վերականգնված արտադրանքը կազմում է 33,23 մ 3 . կՎտ.ժամ, կամ բերարտադրված էլ. Եներգիայի 68 % -ը և այդ փոխհատուցված արտադրանքի համար վառելիքի ծախսը կազմում է 131,2 գր.գագ/կՎտ.ժ:

Ջրային մշուշապատման համակարգի աշխատանքի ժամանակ ծախսվում է էլ. Եներգիա և քիմիապես մաքրված ջուր, որը պատրաստվում է կայանի քիմիական արտադրամասում, ինչպես նաև, հավելյալ վառելիք: Նամակարգի կիրառման օգուտը հանդիսանում է դրա բերած հզրության ավելացման հաշվին արտադրված էլ. Եներգիան:

Կառուցվել է առյուսակ, որում բերված են դիտարկվող միջին ջերմաստիճանների դեպքում ջրային մշուշապատման համակարգի աշխատանքի բնութագրիչ տեխնիկատնտեսական ցուցանիշների արժեքները (տես աղ.6):

Այսուակ 6.

Ջրային մշուշապատմամբ հովացման համակարգի տնտեսական ցուցանիշներ

Արանց- հովացման	հովաց- մամբ		$T, \text{ժամ}$	$G_{\text{ջուր}},$ $\frac{կգ/վ}{}$	$N_{\text{պոմպ}},$ $\frac{կՎտ}{}$	$\Delta N,$ $\frac{կՎտ}{}$	$\Theta,$ $\frac{մ/մ}{},$ η	$\Pi, \text{մԼ}$. η	
	$t, {}^{\circ}C$	$\varphi, \%$							
17,5	49,9	11,5	100	1279,2	1,27	41,9	8374,5	3,6	161,8
22,5	49,9	15,6	100	1586,4	4,66	153,6	8610	15,6	206,4
27,5	49,9	19,7	100	909,6	1,67	55,9	9362	3,4	128,6
32,5	49,9	23,9	100	33,6	1,94	63,9	10150	0,14	5,1

Ինչեւս երևում է աղ.6-ից, ամբողջ տարվա ընթացքում հովացման համակարգի 3808,8 ժամ աշխատանքի ընթացքում ծախսվում է 22,8 մլն. դր հավելյալ վարեկիքի, աղաղրկված օրի և պոնայի ծախսած էլ. էներգիայի համար, իսկ ավելացած հզորության հաշվին արտադրվում է 502,1 մլն. դր արժողությամբ էլ.էներգիա: Ուստի տարեկան հավելյալ եկամուտի և ծախսերի տարրերությունը կազմում է 479,2 մլն. դր:

Կատարենք տարեկան շահագործման ծախսերի և հավելյալ եկամուտի տարրերության հաշվարկ երկու տարբերակով՝ առաջինում ընդունելով օ-ն հավասար 0,121-ի, որը համապատասխանում է 8,3 Ետգնման տարիներին, որը ընդունված գործակից է էներգետիկական օրյեկտների համար: Երկրորդ դեպքում հաշվարկենք տարեկան եկամուտը, և գտնենք օ-ի նվազագույն արժեքը, այսինքն կապիտալ ներդրումների Ետգնման նվազագույն ժամկետը: օ-ի 0,121 արժեքի համար՝

$$3=0,121*330240000+22826748=62785788 \text{ դր, իսկ} \\ \Pi=502077738 \text{ դր}$$

Ուստի՝ $\Pi=439291950$ դր

Այսինքն տարեկան մաքրու հավելյալ եկամուտը կկազմի 439,3 մլն. դր:

Երկրորդ դեպքի համար հաշվարկենք օ-ն առանց կապիտալ ներդրումների Ետգնման մասնաբաժնի, այն հավասար կլիմի 22,8 մլն. դր, իսկ Պ-ն կրկին հավասար կլիմի՝ 502,1 մլն. դր: Եվ $\Pi=479,2$ մլն. դր: Եթե Կ-ն բաժանենք (Π -ի) վրա կստանանք կապիտալ ներդրումների Ետգնման նվազագույն ժամկետը՝ 0,689 տարի, կամ $\sigma=1,45$ -ի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Առաջարկվում է ԵրՁԷԿ-ի համակցված էներգաբլոկի ԳՏՏ կոմպրեսոր ներծծվող օդի հովացում՝ բարձր ճնշումային մշուշապատման համակարգի միջոցով, մքնոլորտային օդի բարձր ջերմաստիճանների դեպքում հզորության թերարտադրման փոխհատուցման նպատակով:
- Մշակվել է ԳՏՏ ջերմային հաշվարկի մեթոդ, որը հնարավորություն է տալիս հաշվարկել ցանկացած ԳՏՏ-ի էներգետիկական և արդյունավետության ցուցանիշները կախված կոմպրեսոր ներծծվող օդի պարամետրերից:
- Առաջարկված ԳՏՏ էներգետիկական և արդյունավետության ցուցանիշների հաշվարկի մեթոդի սխալանքը կազմում է 0,87% ԳՏՏ ՕԳԳ-ի համար և 0,46%՝ հզորության համար:
- Առաջարկվել է ԳՏՏ կոմպրեսոր ներծծվող օդի ջերմաստիճանի փոփոխության ազդեցությունը ԳՏՏ կոմպրեսորի ճնշման բարձրացման աստիճանի վրա գնահատող փորձնական բանաձև:
- Առաջարկվել է ԳՏՏ կոմպրեսոր ներծծվող օդի ջերմաստիճանի փոփոխության ազդեցությունն օգտահանիչ կաթսայով շոգետուրբինի զարգացրած հզորության գնահատման մերողիկա:
- Առաջարկվել է ԳՏՏ կոմպրեսոր ներծծվող օդի ջերմաստիճանի փոփոխության ազդեցությունն օգտահանիչ կաթսայով շոգետուրբինի ժամանակակից կիրառման դեպքում ԵրՁԷԿ-ի համակցված էներգաբլոկում հնարավոր է փոխհատուցել տարվա 3808 ժամերի ընթացքում դիտարկվող բարձր ջերմաստիճանով

պայմանավորված թերարտադրոված 48,8 մլն. կՎտ.ժամ էլ. Էներգիայի 68%-ը:

7. Ապացուցվել է ԳՏՏ կոմպրեսոր մատուցվող օդի հովացման համակարգի տեղադրման տեխնիկատեսական շահավետությունը Երևան քաղաքի համար, ԵրԶԵԿ-ի օրինակի վրա: Հաշվարկված կապիտալ ներդրումների ետզննան ժամկետը կազմել է 0,69 տարի:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները արտացոլված են հետևյալ հրատարակումներում

- 1. Ռաֆյան Ռ.Ա.** Գազատուրբինային տեղակայանք տրվող օդի հովացման համակարգեր // ՀՆԱ Լրաբեր.-2010.-Հատոր 7, №1.-էջ 72-73:
- 2. Ռաֆյան Ռ.Ա.** Մաթկադ ֆունկցիաների կիրառությունը ԳՏՏ-ի վառելիքային կոմպրեսորի ջերմային հաշվարկում մեթանի ջերմաքիմիական պարամետրերի որոշման համար // ՀՆԱ Լրաբեր.-2015. Հատոր 12, №2.-էջ 277-280:
- 3. Ռաֆյան Ռ.Ա** Ծրջակա միջավայրի պայմանների ազդեցությունը գազատուրբինային տեղակայանքի արդյունավետության ցուցանիշների վրա // ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ) Լրաբեր.-2011.- Հատոր 3, №1.-էջ 385-388:
- 4. Մարովիսյան Ո.Զ., Ռաֆյան Ռ.Ա.** Գազատուրբինային տեղակայանքի կոմպրեսոր ներծծվող օդի ջերմաստիճանի բարձրացման ազդեցությունը շղգեգազային տեղակայանքի աշխատանքի վրա // Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի և ՀՊՃՀ Տեղեկագիր.- 2011.-Հատոր 64, №3.-էջ 243-249:
- 5. Մարովիսյան Ո.Զ., Ռաֆյան Ռ.Ա.** Բնակլիմայական պայմանների ազդեցությունը Երևանի ՁԵԿ-ի համակցված էներգաբլոկի աշխատանքի վրա // Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի և ՀՊՃՀ Տեղեկագիր.- 2013.- Հատոր 66, №2.-էջ 120-126:
- 6. Ռաֆյան Ռ.Ա., Մարովիսյան Ո.Զ., Խաչատրյան Ռ.Գ.** ԳՏՏ կոմպրեսոր ներծծվող օդի ջրային մշուշապատճանը հովացման համակարգի կիրառման տեխնիկատեսական հաշվարկ (ԵրԶԵԿ-ի օրինակով) /Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի և ՀԱՊՃՀ Տեղեկագիր.-2015.- Հատոր 68, №2.-էջ 163-168:

РАФЯН РОБЕРТ АРТУРОВИЧ

ИССЛЕДОВАНИЕ И ОПТИМИЗАЦИЯ РАБОЧИХ РЕЖИМОВ ПАРОГАЗОВОЙ
УСТАНОВКИ (НА ПРИМЕРЕ ЕРТЭЦ)
РЕЗЮМЕ

В производстве электрической энергии газотурбинные установки (ГТУ) и работающие на их основе комбинированные парогазовые энергоблоки являются основным направлением развития, что обусловлено высокой эффективностью и маневренностью таких энергоблоков, а также более низким влиянием на окружающую среду по сравнению с традиционными энергоблоками.

Тем не менее следует отметить, что производительность и эффективность работы ГТУ в значительной степени зависят от параметров окружающего воздуха, в частности от температуры. Учитывая тот факт, что пик потребления электрической энергии в летнее время, обусловленный практически массовым использованием систем кондиционирования воздуха, совпадает с падением производительности ГТУ, перед производителями и операторами возникла необходимость поиска новых методов компенсации снижения мощности. Электрическая система Армении не является исключением, и перед ней также стоят вопросы решения указанной проблемы.

Очевидно, что любая технология, способная предотвратить или восстановить снижение мощности и эффективности из-за неблагоприятных атмосферных условий, становится ценным ресурсом. В связи с этим в последнее время широкое распространение получили разные системы охлаждения воздуха, поступаемого в компрессор ГТУ, что позволяет приблизить энергетические показатели ГТУ к проектным значениям. Точная оценка воздействия параметров всасываемого в компрессор ГТУ воздуха на энергетические показатели парогазовых установок (ПГУ) является основанием для выбора метода восстановления данного воздействия и представляет собой чрезвычайно актуальную и насущную задачу современной энергетики.

Целью диссертационной работы является исследование влияния параметров окружающего воздуха на энергетические характеристики газотурбинных и парогазовых установок и разработка метода оптимизации рабочих режимов последних.

Исследованы разные системы охлаждения поступающего в компрессор ГТУ воздуха и выбран оптимальный метод.

Разработана методика расчета энергетических параметров ГТУ, позволяющая произвести расчет влияния температуры поступающего в компрессор ГТУ воздуха. Полученные на основе разработанного метода результаты сравнены с показаниями ГТУ, установленной на энергоблоке Раздан-5.

Исследовано влияние поступающего в компрессор ГТУ воздуха на степень повышения давления в компрессоре и дана формула оценки данного влияния.

Разработана методика оценки влияния поступающего в компрессор ГТУ воздуха на мощность паровой турбины, работающей в комбинированном цикле с котлом-утилизатором.

Дана технико-экономическая оценка установки выбранной оптимальной системы охлаждения поступающего в компрессор ГТУ воздуха на основании расчетов для ПГУ ЕрТЭЦ.

Разработанная методика и выполненное на ее основе программное обеспечение могут быть использованы с целью оценки и исследования методов оптимизации энергетических показателей ГТУ и ПГУ на действующих электростанциях, а также во время наладочных, проектных и испытательных работ.

В работе были получены следующие основные выводы:

1. Предлагается охлаждение воздуха, подаваемого в компрессор ГТУ комбинированного энергоблока ЕрТЭЦ с помощью системы распыления воды высокого давления, с целью восстановления недопроизведенной мощности при высоких температурах атмосферного воздуха.
2. Разработана методика теплового расчета ГТУ, которая дает возможность оценки энергетических показателей любой ГТУ в зависимости от параметров всасываемого в компрессор воздуха.
3. Проценты ошибочности разработанной методики оценки энергетических показателей ГТУ составили 0,87% - для КПД и 0,46% - для мощности.
4. Предложена эмпирическая формула оценки воздействия температуры всасываемого в компрессор воздуха на степень повышения давления компрессора.
5. Предложена методика оценки воздействия температуры всасываемого в компрессор воздуха на мощность паровой турбины, работающей в комбинированном цикле с котлом-утилизатором.
6. При использовании предлагаемой системы охлаждения на комбинированном энергоблоке ЕрТЭЦ из 48,8 млн.кВтч недопроизведенной электрической энергии возможно возмещение 68% при 3808 часах работы в условиях повышенной температуры.
7. Дано технико-экономическое обоснование установки системы охлаждения подаваемого в компрессор ГТУ воздуха для условий г. Еревана на примере ЕрТЭЦ. Расчетная окупаемость капиталовложений составила 0,69 года.

ROBERT ARTHUR RAFYAN

INVESTIGATING AND OPTIMIZING THE OPERATION MODES OF A
GAS-STEAM UNIT (ON THE EXAMPLE OF YTPP)
SUMMARY

Gas turbine plants (GT) and, operating on their basis, combined power units are the main development trend in the production of electric power. This is conditioned by high efficiency and maneuverability of such power units, as well as by a lower environmental impact compared with conventional power units.

Nevertheless, it is worth noting that the performance and efficiency of gas turbines are considerably dependent on the parameters of the ambient air, in particular, on the temperature. Given the fact that the peak of power consumption in summer, due to the virtually massive use of air-conditioning systems, coincides with the drop in the gas turbine performance, manufacturers and operators are forced to look for new ways of compensation of the reduced power. The electric power system of Armenia is not an exception, and also faces the problem described above.

It is obvious that any technology which can prevent or restore the power reduction and efficiency due to adverse weather conditions, becomes a valuable resource. In this regard recently different cooling systems of the air entering the gas turbine compressor are widely used, allowing convergence of gas turbine energy performance to the design values. The accurate assessment of the impact of the parameters of the gas turbine compressor intake air on the steam-gas power plant performance is the basis for the choice of the method of recovery of the given impact, and is an extremely important task in modern energetics.

The goal of the dissertation is to study the influence of the ambient air parameters on the energy characteristics of gas turbine and steam-gas power plants and the development of the optimization method of their operation modes.

Various systems of gas turbine compressor intake air cooling are investigated and an optimal method is chosen.

A method for calculating the GT energy parameters enabling to calculate the impact of the gas turbine compressor intake air temperature is developed. The developed method is tested in comparison with the readings of the power unit at Hrazdan-5 CCPP.

The impact of the gas turbine compressor intake air temperature on its pressure ratio is investigated, and a formula for assessing that impact is given.

A method is developed for assessing the impact of the gas turbine compressor intake air on the steam turbine power in a combined cycle with a heat recovery boiler.

A feasibility assessment of the selected optimal cooling system is given on the basis of calculations for the Yerevan CCPP.

The developed method and the software based on it can be used to estimate and investigate the GT and combined cycle power unit optimization methods in functioning power plants, as well as at commissioning, designing and testing works.

The main conclusions are as follows:

1. Cooling of the air supplied to the compressor of GT of Yerevan CCPP with high-pressure water fogging system is proposed in order to restore the underproduction of power due to high air temperatures.

2. A method of GT thermal cycle calculation is developed which enables to evaluate the energy performance of any gas turbine, depending on the parameters of the intake air of the compressor.

3. The error of the developed method for evaluating the energy performance of the GT is 0,87% for efficiency and 0,46% for power calculations.

4. An empirical formula for evaluating the impact of the temperature of the intake air on the compressor pressure ratio is proposed.

5. A method for evaluating the impact of the temperature of the intake air of GT compressor on the steam turbine power operating in a combined cycle with the recovery boiler is proposed.

6. When using the proposed cooling system in the Yerevan CCPP, it is possible to compensate 68% of the underproduced 48.8 million kWh electric power during 3808 hours of operation at increased temperatures.

7. The feasibility study justified the installation of the cooling system of the GT compressor intake air for Yerevan on the example of the Yerevan CCPP. The estimated return on the investment is 0,69 years.

